այնպիսի հարց կը տան, որ կապոած կը մնան: Նորին սրբազնութիւնը հիացած է իմ աշակերտներով, ամիս չի անցնի, որ նորին սրբազնութիւնը ոտքը ներս չդնէ իմ դպրոցի շեմքից: Ահա այդ թանաքամանը նորին սրբազնութիւնն է ընծայել ինձ, պարոն:

Վերջին խօսքերով պատոելին կամեցաւ ուշադրութիւն դարձնել իր թանաքամանի վրայ, այդ պատճառով ձեռքը տարաւ դէպի ուռած փորը:

— Այլեւս ի՞նչ են սովորում, — հարցրեց Ասլանը:

— Մինչեւ ճաշ ուսում են ստանում, սովորում են գրել, կարդալ եւ զանազան իմաստութիւններ, իսկ ճաշից յետոյ սովորում են քաղաքավարութիւն, մարդավարութիւն՝ այդպիսի բաներ:

Այս անգամ պատոելին, որ բոլոր խօսակցութեան ժամանակ մոռացել էր իր կարմիր քիթը, ձախ ձեռքի ցուցամատը տարաւ դէպի ձախ կողմի պնչածակը եւ սկսեց քչփորել, կարծես այնտեղ մի բան նեղացնում էր նրան: Յետոյ, կամենալով քաղաքավարութեան մի քանի օրինակներ ցոյց տալ, դիմեց աշակերտներից մէկին, ասելով.

— Ապա՛, Օհանիկ, պարոնին մէկ պատիւ տուր:

Աշակերտների միջից դուրս եկաւ մի թզաչափ երեխայ, կանգնեց Ասլանի առջեւ եւ, երկու ձեռքերը դնելով միմեանց վրայ, փոքրիկ ափերը բաց արեց, մեկնեց դէպի Ասլանը: Բայց Ասլանը չգիտէր ի՞նչ անել: Պատոելին ժպտելով նկատեց, որ ձեռքը դնէ աշակերտի ափի մէջ: Ասլանը կատարեց նրա պատոերը: Փոքրիկ Օհանիկը, նրա աջը երկու ափերի մէջ բռնած, նախ տարաւ դէպի շրթունքը, համբուրեց, յետոյ տարաւ դէպի ճակատը, դրեց գլխի վրայ:

— Ապա՛, Աւագ, պարոնին գլուխ տո՛ւր, — պատոելին դարձաւ դէպի մի այլ աշակերտ:

Բայց Ասլանը թոյլ չտոեց, ասելով, որ չանհանգստացնէ աշակերտներին: Այսպէս, պատոելին աշխատում էր ցոյց տալ իր սանիկների բոլոր մտաւոր եւ բարոյական կարողութիւնը, որոնք, նրա կարծիքով, օրինակելի էին ամբողջ քաղաքում: Նա խնդրեց, որ աշակերտները զանազան տաղեր երգէին, աւելացնելով, որ բոլոր տաղերը գիտեն՝ «վարդի ու բուլբուրիէ տաղը, գինու տաղը, մէջլիսի տաղերը, մի խօսքով, բոլորը գիտեն:

— Հայոց պատմութիւն սովորո՞ւմ են, — հարցրեց Ասլանը:

— Ի՞նչ պէտք է հայոց պատմութիւնը, — պատասխանեց պատոելին իր սովորական ժպիտով, — հայոց թագաւորները բոլորն էլ կռապաշտ էին: